

դատան անող հարուածները ծանրութեան տակ:

Թերթեցէք Պարթև Սահակի, Խորենացու, Փարսեցու, Գաղիկ Բ-ի և այսպիսիների կենսագրութիւնները ճիշտ, նոր ու նորագոյն ժամանակներում և կը տեսնէք, որ հայը հանձար վառող ազգ չի եղել, այլ հանձար սպանող:

Եւ որովհետև հանձարն է միայն, որ ազգ է սպանում, որ ազգ է ազնուացնում ու բարձրացնում, ուստի և քաջակերութեան պակասութիւնից հայ հանձարը բաց է, անցեր», ուստի և անցնում է հէնց ինքը հայ ազգը:

Բայց այս չէ միայն բարձրագիտական տո՛մի՞ս յանցանքը. հանձարն ու հանձարեղութիւնը քաջակերութիւնից զրկելով ու հարձեծելով, նա մի ինքնատու սերտագործութեամբ քաջակերելը՝ ապարեզ է հանել հանձարեղութեան, սաղմոսի մտնուով բացարձակ անշոքոքութիւնը, սպիտակութիւնը, ստուգիւնը, անձաշակութիւնը և այդ ամենին ծափ է տալիս, ճիշդ այնպէս, ինչպէս մոլեզնիակ ու շողոքորթ Հոսմը Ներսիսն էր ծափահարում անմեծան երգիչ հուշակելով շորհազուրկ բռնաւորին:

Բենիկ վարդապետ

ՄԵՆՐ ԵՐԵՎԱՆԻՆ ԶԱՄԱՐ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿ ԵՐ

(Յօդուած Մարգարէի արքեպ. Օրմանանի)

Մեծ յօրելեանը, որ հայ մտաւորական կենսաբնի սօճը պիտի ըլլայ, ա՛նհուն միտքը զբաւած էր, և փափագ կայ անոր յատուկ նշանակութիւն և փայլ սուլ արտաստվոր հանգրուան մը կազմելով 1912 - 13 թուականէն, որ՝ ինչ ալ ըլլան տարբեր գննութեանց արդիւնքները՝ այլևս ճանչցուած է իբր հայ գիրին և հայ աիպին դարադարձը, եթէ ոչ ժամանակագրական ամենախիտ ճշգրտութեամբ, գոնէ ընդհանուր ընդունելութեամբ:

Տօնախմբութիւններու և հանդէսներու մէկ մասը ստորեայ ցոյցերով կանցնի. ճառ, երգ, ճառ, երկերով, ցայգահանդէս և այլ նմաններ, որոնք պէտք են իբր արտայայտութիւն և իբր վայելք, բայց հետք չեն թողոր: Միւս մասը մնայուն նշաններու վրայ կը հաստատուի, զի՛քք, արձանազիրք, կոթող, շէնք, և նմաններ Բայց վերջին տաններ սկսած է ընդհանրանալ զբանագրութիւն (ֆօնդ) կազմելու եղանակը և անոր շահով սեէ ազգօգուտ ձեռնարկ մը կամ գործ մը սպահովելու փափագը:

Այս անգամ ալ այս սենակ նախաձեռնութիւններ տեղ-տեղ սկսած են:

Որչափ կը լսեմ և կը կարդամ, ուսուցչական և ուսանողական նպատակներ կը գործին նոր զբաղմունքներու ձեռնարկներուն, և ճիշդ այդ մասին է իմ ընկերք առաջարկը:

Ձեմ ուրանսը, որ ուսուցչութիւն և ուսանողութիւն կարևոր նպատակներ են. բայց ուրիշներ ալ պէտք է համաձայնին, որ սեռ նանարակ էին, տեղական կերպարան ունին, ա՛նձնական հանգամանք կը կրեն, և միայն որոշ անհատներ են անոնց նպատակակէտը: Միւս կողմէն երկուքն ալ մեր ազգին մէջ չեղած բաներ չեն, և սպարազաններու համեմատ կը տարածուին և կը բարգաւաճին հետզհետէ և, որ աւելին է, ընդհանուր ազգութիւնը իբր ուղղակի նպատակ չունին, ինչչափ ալ ազգը անուղղակի կօզուի անոնց չէ:

Այդ մտածուքներով է, որ ես կը յորդորուիմ մեծ յօրելեանին յաւերժացման համար այնպիսի նպատակ մը սահմանել, որ իր տեսակին մէջ եղական ըլլայ, արժանապէս ձեռք չառնուած կէտ մը շօշափէ և սպին հանրութեան ուղղակի յարաբերութիւն ունենայ Այդ նպատակին համեմատ կուգամ առաջարկել ա՛նին մարմիններուն, յանձնաժողովներուն, մասնաժողովներուն, և ուրիշ նախաձեռնարկներուն, որ ամենքն ալ իրենց հաւաքած և հաւաքելիք զբաղմունքներ իրարու միացնեն և հանգանակութեանց աւելի զարկ տալով՝ զայն սպակառելի գումարի մը լրացնեն:

Այդ գումարն սպանով կերպերով շահուտուի, և անոր արդիւնքով սկզբնաւորութիւն ըլլայ կանառ մը կազմելու, հայագիտական կանառ մը, որուն նպատակը պիտի ըլլայ հայութեան վերաբերեալ ուսումները զարգացնել, եղածը կարգաւորել, մասնաւոր զբաղմունքներ համարմանը, դժուարութիւնները լուծել, սպակառ լրացնել, կործիքներն համաձայնեցնել և նոր ճիւղեր մշակել:

Այդ կէտերն յարմար է հետեւեալ չորս բաժանումներու մէջ ամփոփել.

- 1) Կեդու հին և նոր.
- 2) Պատմութիւն և աշխարհագրութիւն.
- 3) Արուեստ և արհեստ.
- 4) Հնութիւնք և կենցաղ:

Թերևս յարմար էր կանառն հաստատել էջմրածնի մէջ, իբր Մայր-Աթոռ և Մայր Կեդուն, բայց ներկայ պարագաներու մէջ նախադասելի կը սեպնք Եղիպատսը, իբր ա՛նին կողմ ցրուած մասերու փոփոխ յարաբերութեանց զիւրին միջավայր մը:

Կանառն կազմութեան լրակաւոր ծրագիր մը պատրաստելու հոգն յառաջիկային թողով, քանի մը նախազիծեր կա՛մ հիմնակէտեր յիշելը բաւական կը սեպնք:

Կեդունին մէջ կը հաստատուին իւրաքանչիւր ճիւղին համար զիւր-իւր հոգա-

և կարող պաշտօնեաներով, իւրաքանչիւր ճիւղին համար երկու կամ երեք անձ:

Այս պաշտօնեաները վարձատրեալ ըլլալուն՝ կրնան հրաւիրուիլ յարաբազմաներ՝ որ կողմէն ալ ըլլան:

Կանառորդներ պիտի որոշուին իւրաքանչիւր ճիւղի համար զատ-զատ, և պիտի առնուին ամեն հայերէ և հայաբնիկներէ՝ առանց խորութեան սեղի և ազգի և կրօնի:

Կանառորդներու համար պայման չէ կեղծորին մէջ ապրիլ, վասնզի ժողովական գումարները տարեկան կա՛մ երկտարեկան պիտի ըլլան, թէ ընդհանուր կանառին և թէ մասնաւոր ճիւղերու հաւաքումներով:

Բուն կանառորդներ իւրաքանչիւր ճիւղին համար տասներկու բաւական կը սեպուին, իսկ թղթակից ընկերներ կրնան ըլլալ անպայման թուով:

Առաջին անգամ հիմնադիրներու անուանումէն ետքը նոր ընտրութիւններ և նախագահութիւններ կանառորդներու քուէով կերտուին:

Ուսումնասիրութեանց համար կրնան որոշ նիւթեր ալ սահմանուիլ, առանց մասնաւորները խախտելու, որոնց վրայ կարծիքներ կը հաւաքուին և լուծուներ կը արուին:

Թէ որոշուած և թէ ազատ ուսումնասիրութեանց զբաղմունքը, և կանառին գործերը յատուկ պարբերակնով կը հրատարակուին:

Դրամագումարին արդիւնքով և պատահական նուէրներով և սովորական բաժանորդութիւններով կը հագացուին ժողովներուն, դիւաններուն, պաշտօնեաներուն, հրատարակութիւններուն և թղթակցութիւններուն ծախքերը:

Ներեալ է նիւթական օգնութիւններ ընել կանառորդներու և թղթակիցներու, եթէ իրենց ուսումնասիրութեանց համար պահանջուած միջոցները չունին:

Այս և դեռ նկատի չառնուած մանրամասնութիւնները սկզբնական փորձառութիւններէ ալ օգտուելով, հաստատուն կանոնադիր պիտի վերածուին, նոյն իսկ կանառին ձեռքով:

Ան այդ հաստատութիւնն է, որ, մեր անուեթեամբ, ընդհանուր հայութեան համար նշանակութիւն կունենայ, անհրաժեշտ եղած, բայց արժանապէս նկատի չառնուած պէտք մը կը լրացնէ, հայագիտական ուսումնասիրութիւններով զբաղողներն իրարու կը ժօնեցնէ և իրք մեծ յօրելեանին մեծութեան համեմատ մեծ գործ մը կը ըլլայ, նպատակին և պարագաներուն մեծութեան հետադատասիրու:

Ես առաջարկեցի թօսքը մեծ յօրելեանով զբաղողներուն Աւելի ընդարձակ բացատրութեանց պատրաստ կը մնամ, եթէ զիստողութիւններու ծանօթանամ:

(«Բիւզանդիոն»)

Ժամ. «Բիւզանդիոն» լսմբ. - Օրմանան սրբազանի առաջակը զիւրեղի է և խորհրդաւոր, նաև ապագայ հնարաւորութիւններով լեցուն: Ատիկա պակասը պիտի լրացնէք այն գործին, զոր ցարդ կատարել են ս. էջմիածին, Վենեսիկ և Վիլենու, նաև Պօլիս, Թիֆլիս, Արմաշ, Նրուսազէմ, և աւելի լայն հիմքեր վրայ պիտի դնէր զայն Բայց, մեր կարծիքով, աւելի իղէալ մըն է, առ որ պէտք է ձգտիլ, քան անիշխական կարելիութիւն մը: Որպէս զի այս ծրագիրը յաջողի, թէ շատ զբաղ պէտք է և թէ միջավայրն ինքն ևս աւելի հարուստ պէտք է ըլլայ ամեն կարգի մտաւորական հայ տարբերով: Առանց մեծագումար բարեխրութիւններու, միայն ժողովրդային նուէրներով այսպիսի հոյակապ խորհրդէ՛ մը իրագործուին անհասանկան կերելի մեզ: Հայ ժողովուրդն օգտագաւառ է, զբակն է, անքէն հեռու տեղ մը հիմնուելիք լոկ զբակն հաստատութեան մը համար այնքան յօտարակամ հանգանակութիւն չի բանար իբր մէջ եւ եթէ մեծաքանակ կուգար մը հարց համար արամարկել ըլլայ, մեքք, այժման հայ իրակատարութեան մէջ, աւելի ըստպարտական կը նկատելիք այն զբաղ զորձածով հող դիւրու և յառաջիկային հայ մշակներուն բաշխելու, որպէս զի պինդ կապուին հայրենի երկրին և հոս աճին, քան աւղակեանցումն ուսմանց յատկացնելու, որոնք կը տեսնենք թէ այժման քաղաքակրթութեանց քով այնքան ծանր չեն կշեռն ժողովրդէ մը քաղաքակրթական իրաւունքներու ձանջնալու և պաշտպանելու համար, որչափ կը կշեռն նիւթական կարողութիւնը, նիւթական զիրքը բնակչութեան թիւը, Ֆիզիքական ոյժն և զբակն սեփականութիւնը: Հայը զարգիս աւելի կը կարծախ նիւթական, ճարտարական, զբակն, անտեսական կարողութիւններու, քան ստակ ակադեմիական կա՛մ զեղարուեստական կալիւստներու Իր մասաւոր զարգացումներն իսկ անտեսական, ճարտարական, շահագործական ձգտում մը պէտք է ունենան առակապէս, մինչև որ իրեն համար նիւթական զիրք մը չլինած անհատը կա՛մ հարաբերութիւնը ժամանակ և միջոց ունենայ մտաւոր վայելքներուն ալ պաշտօն տանելու: Ասով հանդերձ, իցիկ թէ հայ հարուստ մը կամ հարուստներ Օրմանան սրբազանի առաջարկած հայկական հաստատութիւնը մարմնաւորիւմ չափ բարձր ներշնչում մը ունենային օր մը:

ՂԱՐԱՄԱՂԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԵՐԵՎԱՆԻ ՇՈՒՂՅԸ

Չաւէն և Բարզէն վարդապետները, որոնք Դարաբաղի թեմական դպրոցի առաջիկայ յօրելեանի աւիթով շրջապարտ էին կողկասի և Ռուսաստանի մի քանի քաղաքներ յիշեալ դպրոցի սպահովութեան ֆօնդի համար հանգանակութիւն անելու, այս օրերս վերադարձան Թիֆլիս:

Ինչպէս լսեցինք, հանգանակութիւնը,